

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

### ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Մոսկվա, 2010 թվականի դեկտեմբերի 9)

Բելառուսի Հանրապետության կառավարությունը, Ղազախստանի Հանրապետության կառավարությունը եւ Ռուսաստանի Դաշնության կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

ղեկավարվելով Եվրասիական տնտեսական համայնքի Մաքսային միության բարձրագույն մարմնի) Միջպետական խորհրդի 2009 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 35 որոշմամբ,

մտադրություն ունենալով զարգացնել առևտրատնտեսական, արդյունաբերական, մշակութային եւ գիտատեխնիկական համագործակցությունը,

ելնելով մտավոր սեփականության պահպանման եւ պաշտպանությանը եւ կեղծված ապրանքների միջազգային առևտրի դեմ պայքարին ուղղված միջոցների համաձայնեցված համակարգի կիրարկման անհրաժեշտությունից,

ձգտելով ստեղծել բարենպաստ պայմաններ Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության Միասնական տնտեսական տարածքի եւ Մաքսային միության ձեւավորման համար՝ մտավոր սեփականության իրավունքների պահպանման եւ պաշտպանության միասնական համակարգված համակարգի ձեւավորման միջոցով,

համաձայնեցին ներքոնշյալի մասին.

### Բաժին I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

#### Հոդված 1

Սույն Համաձայնագիրը ուղղված է Կողմերի ազգային օրենսդրությամբ պահպանվող մտավոր գործունեության արդյունքների եւ ապրանքների, աշխատանքների ու

ծառայությունների անհատականացման միջոցների պահպանման եւ պաշտպանության բնագավառում կարգավորման սկզբունքների միասնականացմանը:

## **Հոդված 2**

1. Կողմերը հիմնվում են մտավոր սեփականության իրավունքների պահպանման եւ պաշտպանության բնագավառում միջազգային ընդհանուր իրավական բազայի վրա, պահպանում Առեւտրի համաշխարհային կազմակերպության «Մտավոր սեփականության՝ առեւտրին առնչվող իրավունքների հայեցակետերի մասին» համաձայնագրի սկզբունքները եւ ղեկավարվում մտավոր սեփականության բնագավառում միջազգային այն համաձայնագրերով, որոնք գտնվում են Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության վարչական վերահսկողության ներքո, ինչպես նաեւ այլ միջազգային համաձայնագրերով, որոնց մասնակից են Կողմերը:

2. Այն Կողմերը, որոնք մինչեւ սույն Համաձայնագրի ստորագրման պահը «Ապրանքային նշանների իրավունքի վերաբերյալ» 2007 թվականի Սինգապուրի պայմանագրին եւ «Կատարողների, հնչյունագրեր արտադրողների եւ հեռարձակող կազմակերպությունների պահպանության մասին» միջազգային կոնվենցիային (1961 թվականի Հռոմի կոնվենցիա) մասնակից չեն, ստանձնում են նշված միջազգային պայմանագրերին միանալու պարտավորություն:

3. Կողմերը պարտավորվում են համակարգել գործողությունները Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության, Առեւտրի համաշխարհային կազմակերպության «Մտավոր սեփականության՝ առեւտրին առնչվող իրավունքների հայեցակետերի մասին» համաձայնագրի մասով Կոմիտեի գործերին մասնակցության շրջանակներում (Առեւտրի համաշխարհային կազմակերպությանը Կողմ հանդիսացող պետությունների միանալուց հետո):

*КонсультантПлюс: ծանոթագրություն*

*Փաստաթղթի տեքստում հավանաբար վրիպակ է եղել. Ապրանքային նշանների իրավունքի վերաբերյալ Սինգապուրի պայմանագիրը ստորագրվել է 2006 թվականի մարտի 27-ին:*

### **Հոդված 3**

1. Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է իր ազգային օրենսդրության մեջ ամրագրել Կողմ հանդիսացող մյուս պետությունների ֆիզիկական եւ իրավաբանական անձանց, մտավոր գործունեության արդյունքների եւ անհատականացման միջոցների՝ միեւնույն այնպիսի մակարդակի պահպանություն եւ պաշտպանություն ապահովելու մասին դրույթ, ինչպիսին այն ապահովում է իր ֆիզիկական եւ իրավաբանական անձանց, մտավոր գործունեության արդյունքների եւ անհատականացման միջոցների համար իր տարածքում՝ սույն Համաձայնագրով նախատեսված չափով եւ Կողմերի միջազգային պարտավորությունների շրջանակներում:

2. Կողմերը կարող են իրենց ազգային օրենսդրության մեջ կիրառել այնպիսի նորմեր, որոնք պետք է ապահովեն մտավոր սեփականության իրավունքների պահպանության եւ պաշտպանության ավելի մեծ մակարդակ, քան այն նորմերը, որոնք ընդգրկված են սույն Համաձայնագրում՝ պայմանով, որ դրանք չեն հակասի սույն Համաձայնագրի դրույթներին:

*КонсультантПлюс: ծանոթագրություն*

*Տեղեկատվական բազայում ընդգրկված է «Գրական եւ գեղարվեստական երկերի պահպանության մասին» 1886 թվականի սեպտեմբերի 9-ի Բեռնի կոնվենցիան՝ 1979 թվականի սեպտեմբերի 28-ի փոփոխություններով:*

## **Բաժին II**

### **Հեղինակային եւ հարակից իրավունքներ**

#### **Հոդված 4**

1. Կողմերը պարտավորվում են ապահովել մտավոր գործունեության արդյունքների պահպանությունը՝ հիմնվելով «Գրական եւ գեղարվեստական երկերի պահպանության մասին» 1971 թվականի Բեռնի կոնվենցիայի, Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության «Հեղինակային իրավունքի մասին» պայմանագրի եւ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության «Կատարումների եւ հնչյունագրերի մասին» պայմանագրի դրույթների վրա:

2. Էլեկտրոնային հաշվողական մեքենաների համար ծրագրերը (համակարգչային ծրագրեր)՝ ներառյալ ելակետային տեքստը եւ օբյեկտի կոդը, պահպանվում են որպես գեղարվեստական երկեր՝ «Գրական եւ գեղարվեստական երկերի պահպանության մասին» 1971 թվականի Բեռնի կոնվենցիայի համաձայն:

3. Ժողովածու երկը, այսինքն՝ երկեր, որոնք նյութերի ընտրության կամ տեղադրման առումով հանդիսանում են ստեղծագործական աշխատանքի արդյունք, անկախ դրանց արտահայտման ձեւից, պահպանվում են առանց փոփոխվելու: Ընդ որում ժողովածու երկը պահպանվում է հեղինակային իրավունքով՝ անկախ նրանից, թե այն երկերը, որոնց վրա դրանք հիմնված են կամ որոնք դրանք ներառում են, հեղինակային իրավունքի օբյեկտ են, թե ոչ:

4. Հեղինակային իրավունքները տարածվում են գիտության, գրականության եւ արվեստի երկերի վրա; Երկի հեղինակին են պատկանում, մասնավորապես, հետեւյալ իրավունքները՝

- 1) երկի նկատմամբ բացառիկ իրավունք.
- 2) հեղինակային իրավունք.
- 3) հեղինակի իրավունքը անվան առումով.
- 4) երկի անձեռնմխելիության իրավունք.
- 5) երկի բացահայտման իրավունք.
- 6) Կողմերի ազգային օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ:

5. Կողմերը պարտավորվում են առանձին դեպքերում սույն հոդվածի շրջանակներում պահպանվող մտավոր գործունեության արդյունքների վրա դնել այնպիսի սահմանափակումներ եւ կիրառել դրանց նկատմամբ իրավունքներից այնպիսի զրկում, որոնք չեն հակասի երկերի կամ հարակից իրավունքների օբյեկտների բնականոն օգտագործմանը եւ անհիմն չեն սահմանափակի իրավատերերի օրինական շահերը:

6. Կողմերը պարտավորվում են պահպանել հեղինակի երկի նկատմամբ բացառիկ իրավունքի, համահեղինակությամբ ստեղծված երկի նկատմամբ բացառիկ իրավունքի, հեղինակի մահից հետո հրապարակված երկի նկատմամբ բացառիկ իրավունքի ժամկետները, որոնք չպետք է պակաս լինեն «Գրական եւ գեղարվեստական երկերի պահպանության մասին» 1971 թվականի Բեռնի կոնվենցիայիով, Առեւտրի համաշխարհային

կազմակերպության «Մտավոր սեփականության՝ առետրին առնչվող իրավունքների հայեցակետերի մասին» համաձայնագրով եւ «Կատարողների, հնչյունագրեր արտադրողների եւ հեռարձակող կազմակերպությունների պահպանության մասին» միջազգային կոնվենցիայով (1961 թվականի Հռոմի կոնվենցիա) սահմանված ժամկետներից: Կողմերի ազգային օրենսդրության մեջ կարող են ամրագրված լինել սույն հոդվածում նշված իրավունքների պահպանության մեծ ժամկետներ:

### **Հոդված 5**

Յուրաքանչյուր Կողմ պետք է կինեմատոգրաֆիական երկերի առումով իրավատերերին իրավունք ընձեռի թույլատրել կամ արգելել հեղինակային իրավունքով պահպանվող իրենց երկերի բնօրինակների կամ դրանց օրինակների առետրային նպատակով հրապարակային վարձույթը մեկ այլ Կողմ հանդիսացող պետության տարածքում:

### **Հոդված 6**

Սույն Համաձայնագրի նպատակներով՝ կատարողների ստեղծագործական աշխատանքի արդյունքների (կատարման), հնչյունագրերի նկատմամբ մտավոր սեփականության (գույքային եւ անձնական ոչ գույքային) իրավունքները եւ Կողմերի օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքները համարվում են հեղինակային իրավունքներին հարակից իրավունքներ:

### **Հոդված 7**

1. Սույն Համաձայնագրի նպատակներով՝ կատարող (կատարման հեղինակ) է համարվում այն ֆիզիկական անձը, որի ստեղծագործական աշխատանքի արդյունքում ստեղծվել է կատարում՝ արտիստ-կատարողը (դերասան, երգիչ, երաժիշտ, պարող կամ այլ անձ, որը կատարում է դեր, կարդում, ասմունքում, երգում, նվագում երաժշտական գործիք կամ այլ կերպ մասնակցում է գրականության, արվեստի կամ ժողովրդական երկերի կատարմանը, այդ թվում՝ էստրադային, կրկեսային, կամ տիկնիկային համարներին), ինչպես նաեւ ներկայացման ռեժիսոր-բեմադրիչը (անձը, որը բեմադրում է թատերական,

կրկեսային, տիկնիկային, էստրադային կամ այլ թատերահանդիսային ներկայացում) եւ դիրիժորը:

2. Կողմերը փոխադարձ հիմունքներով Կողմերի կատարողներին են տրամադրում հետեւյալ իրավունքները՝

1) կատարման բացառիկ իրավունք.

2) հեղինակային իրավունք՝ կատարման հեղինակ ճանաչվելու իրավունք.

3) անվան նկատմամբ իրավունք՝ հնչյունագրերի օրինակների վրա կամ կատարումն այլ կերպ օգտագործելիս սեփական անունը կամ կեղծանունը նշելու իրավունք, կատարողների խմբի անվանումը նշելու իրավունք՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ստեղծագործության օգտագործման բնույթը բացառում է կատարողի անունը կամ կատարողների խմբի անվանումը նշելու հնարավորությունը:

4) Կողմերի ազգային օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ:

3. Կատարողները իրականացնում են իրենց իրավունքները՝ պահպանելով կատարվող ստեղծագործությունների հեղինակների իրավունքները:

4. Կատարողի իրավունքները ճանաչվում եւ գործում են՝ անկախ կատարվող ստեղծագործության հեղինակային իրավունքների առկայությունից եւ գործելուց:

## **Հոդված 8**

1. Համաձայնագրի նպատակներով՝ հնչյունագիր ստեղծող (արտադրող) է համարվում այն անձը, որի նախաձեռնությամբ եւ պատասխանատվությամբ իրականացվել է կատարման կամ այլ հնչյունների, ինչպես նաեւ այդ հնչյունների ներկայացման առաջին հնչյունագրումը: Այլ ապացույցների բացակայության դեպքում, հնչյունագիր ստեղծող (արտադրող) է համարվում այն անձը, որի անունը կամ անվանումը պարզ կերպով նշված է հնչյունագրի օրինակի եւ (կամ) դրա փաթեթվածքի վրա:

2. Կողմերը տրամադրում են Կողմերի հնչյունագիր ստեղծողներին (արտադրողներին) հետեւյալ իրավունքները՝

1) հնչյունագրման բացառիկ իրավունք.

2) Կողմերի ազգային օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ:

3. Կողմերը պարտավորվում են պահպանել հնչյունագիր ստեղծողների (արտադրողների) պահպանման ժամկետները, որոնք չպետք է պակաս լինեն Առևտրի համաշխարհային կազմակերպության «Մտավոր սեփականության՝ առևտրին առնչվող իրավունքների հայեցակետերի մասին» համաձայնագրով եւ «Կատարողների, հնչյունագրեր արտադրողների եւ հեռարձակող կազմակերպությունների պահպանության մասին» միջազգային կոնվենցիայով (1961 թվականի Հռոմի կոնվենցիա) սահմանված ժամկետներից: Կողմերի ազգային օրենսդրության մեջ կարող են ամրագրված լինել սույն հոդվածում նշված իրավունքների պահպանության մեծ ժամկետներ:

### **Հոդված 9**

1. Հնչյունագիր ստեղծողները (արտադրողները) Կողմ հանդիսացող պետությունների տարածքում իրավունք ունեն թույլատրել կամ արգելել հետեւյալ գործողությունները՝

1) իրենց հնչյունագրերի ուղղակիորեն կամ ոչ ուղղակի կերպով վերարտադրությունը.

2) այլ Կողմ հանդիսացող պետության տարածք հնչյունագրի օրինակների ներմուծումը, որը իրականացվել է առանց հնչյունագրի ստեղծողի (արտադրողի) թույլտվության:

### **Հոդված 10**

1. Սույն Համաձայնագրի նպատակով կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպություն է համարվում այն կազմակերպությունը, որը գործում է Կողմերի ազգային օրենսդրությանը համաձայն՝ հնչյունագրերի հեղինակներից, կատարողներից, ստեղծողներից (արտադրողներից) կամ հեղինակային եւ հարակից իրավունքներ ունեցող այլ անձանցից (այսուհետ՝ հեղինակներ եւ այլ իրավատերեր) ստացված իրավասությունների հիման վրա, կոլեկտիվ հիմունքներով համապատասխան իրավունքների կառավարման ոլորտում՝ հեղինակների կամ այլ իրավատերերի կողմից՝ հեղինակային եւ հարակից իրավունքների օբյեկտների օգտագործման համար վարձատրության ստացումը ապահովելու նպատակով:

2. Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների տարածքում հեղինակների եւ այլ իրավատերերի գույքային իրավունքների արդյունավետ իրացման նպատակով այն դեպքերում, երբ նրանց իրավունքները դժվար է իրականացնել առանձին կարգով, կամ երբ Կողմերի ազգային օրենսդրությամբ թույլատրվում է հեղինակային եւ

հարակից իրավունքների օբյեկտների օգտագործումը՝ առանց համապատասխան իրավատերերի համաձայնության, սակայն նրանց վարձատրություն վճարելու պայմանով, Կողմերը օժանդակություն են ցույց տալիս կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպության ստեղծմանն ու գործունեությանը:

3. Հեղինակային եւ հարակից իրավունքների օբյեկտների իրավաչափ օգտագործման հնարավորությունը ապահովելու նպատակով՝ հաշվի առնելով հեղինակների եւ այլ իրավատերերի՝ իրավունքների հնարավորինս ամբողջական եւ արդյունավետ իրացման շահերը, Կողմերը նախատեսում են կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպության գործունեության հնարավորություն՝ ելնելով ինչպես այն հեղինակների եւ այլ իրավատերերի շահերից, որոնք հանձնել են համապատասխան իրավասությունները նման կազմակերպություններին, այնպես էլ այն հեղինակների եւ իրավատերերի շահերից, որոնք անմիջականորեն չեն հրաժարվել իրենց շահերից բխող գործունեության իրականացումից, այդ թվում նաեւ անձնական նպատակով հնչյունագրերի եւ տեսալսողական ստեղծագործությունների ազատ վերարտադրման համար վարձատրություն ստանալու իրավունքի իրացման դեպքում:

4. Հեղինակային եւ հարակից իրավունքների պահպանման եւ իրացման միասնական համակարգ ստեղծելու նպատակով՝ Կողմերը, նախքան սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելը, կնքում են միջազգային պայմանագիր, որով, ի թիվս այլոց, նախատեսվում է՝

1) Կոլեկտիվ հիմունքներով իրավունքների կառավարման միասնական կարգի սահմանում, այդ թվում՝ անձնական նպատակով հնչյունագրերի եւ տեսալսողական ստեղծագործությունների ազատ վերարտադրման համար վարձատրության իրավունքի իրացման դեպքում.

2) Կողմերի կողմից տվյալների բազայի ստեղծում, որում ներառվում են հեղինակային եւ հարակից իրավունքների պահպանվող օբյեկտների մասին տեղեկությունները եւ տեղեկությունների փոխանակումը կազմակերպելու կարգը.

3) Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպության աշխատանքների համակարգման հարցերով հանձնաժողովի ստեղծում եւ դրա աշխատակարգի սահմանում:



## **Ապրանքային նշաններ**

### **Հոդված 11**

1. Սույն Համաձայնագրի նպատակով՝ ապրանքային նշան եւ սպասարկման նշան (այսուհետ՝ ապրանքային նշան) է համարվում քաղաքացիական շրջանառության մի մասի մասնակիցների ապրանքները եւ (կամ) ծառայությունները քաղաքացիական շրջանառության մյուս մասնակիցների ապրանքներից եւ (կամ) ծառայություններից տարբերելու համար ծառայող նշանը, որը պահպանվում է Կողմերի ազգային օրենսդրության եւ այն միջազգային պայմանագրերի համաձայն, որոնց մասնակից են Կողմերը:

Որպես ապրանքային նշան կարող են գրանցվել բառային, պատկերային, ծավալային եւ այլ նշաններ կամ դրանց համակցությունները: Այլ նշանները կարող են գրանցվել որպես ապրանքային նշաններ Կողմ հանդիսացող պետությունների օրենսդրական ակտերով նախատեսված դեպքերում: Ապրանքային նշանը կարող է գրանցվել ցանկացած գույնով կամ գունային համադրությամբ:

### **Հոդված 12**

1. Ապրանքային նշանի տերը բացառիկ իրավունք ունի օգտագործելու եւ տնօրինելու ապրանքային նշանը, ինչպես նաեւ արգելելու դրա օգտագործումը այլ անձանց կողմից:

2. Ապրանքային նշանի նախնական գրանցման գործողության ժամկետը կարող է երկարաձգվել անսահմանափակ քանակով ապրանքային նշանի տիրոջ՝ դրա գործողության վերջին տարվա ընթացքում ներկայացված դիմումի համաձայն, յուրաքանչյուր անգամ առնվազն 10 տարի ժամկետով:

### **Հոդված 13**

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից Կողմերը սահմանում են ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքների սպառման հետեւյալ սկզբունքը՝ տվյալ ապրանքային նշանի օգտագործումը այն ապրանքների նկատմամբ, որոնք իրավաչափորեն դրվել են քաղաքացիական շրջանառության մեջ Կողմ հանդիսացող պետությունների տարածքում անմիջականորեն իրավատիրոջ կամ վերջինիս

համաձայնությամբ այլ անձանց կողմից, չի համարվում ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքների խախտում:

#### **Հոդված 14**

Նախքան սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելը Կողմերը մշակում եւ սահմանում են միասնական ընթացակարգեր, որոնք անհրաժեշտ են ապրանքային նշանների եւ ապրանքների ծագման տեղանունների (աշխարհագրական նշումների) իրավական պաշտպանության ապահովման համար Կողմ հանդիսացող պետությունների տարածքում: Կողմերը ամրագրում են ապրանքային նշանների եւ ապրանքների ծագման տեղանունների (աշխարհագրական նշումների) գրանցման մշակված միասնական մեխանիզմները առանձին պայմանագրի մեջ:

#### **Ապրանքի ծագման տեղանունը**

#### **Հոդված 15**

1. Սույն Համաձայնագրի նպատակով ապրանքի ծագման տեղանունը, որի համար տրամադրվում է իրավական պաշտպանություն, այն նշումն է, որը պարունակում է քաղաքային կամ գյուղական բնակավայրի, տեղանքի կամ այլ աշխարհագրական օբյեկտի ժամանակակից կամ պատմական, պաշտոնական կամ ոչ պաշտոնական, լրիվ կամ կրճատ անվանումը, կամ այն նշումն է, որը ածանցվել է նման անվանումից եւ դարձել է հայտնի այն ապրանքի նկատմամբ դրա օգտագործման արդյունքում, որի առանձնահատկությունները բացառապես կամ գլխավորապես որոշվում են տվյալ աշխարհագրական տեղանքին բնորոշ բնապայմաններով եւ (կամ) մարդկային գործոններով:

Նշված դրույթները կիրառվում են այն նշման համար, որը հնարավորություն է տալիս նույնականացնելու ապրանքը որպես որոշակի աշխարհագրական օբյեկտի տարածքից ծագող ապրանք եւ չնայած չի պարունակում տվյալ օբյեկտի անվանումը, հայտնի է դարձել տվյալ նշումը այն ապրանքի նկատմամբ օգտագործման հետեւանքով, որի առանձնահատկությունները համապատասխանում են սույն կետի առաջին պարբերության մեջ նշված պահանջներին:

Ապրանքի ծագման տեղանուն չի համարվում այն նշումը, որը չնայած հանդիսանում է կամ պարունակում է աշխարհագրական օբյեկտի անվանումը, սակայն մտել է

համընդհանուր գործածության մեջ որպես որոշակի տեսակի ապրանքի նշում, որը կապված չէ դրա արտադրության վայրի հետ:

2. Սույն Համաձայնագրի նպատակով ապրանքի ծագման տեղանունի նկատմամբ Կողմերը նախատեսում են իրավական միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս շահագրգիռ կողմերին կանխարգելելու՝

1) ապրանքի նշման կամ ներկայացման ժամանակ ցանկացած այնպիսի միջոցի օգտագործում, որը ցույց է տալիս կամ այնպիսի զուգորդություն է առաջացնում, որ այդ ապրանքը ծագում է տվյալ ծագման վայրից տարբերվող այլ աշխարհագրական շրջանից այնպես, որ դա հանրությանը մոլորության մեջ է գցում այդ ապրանքի աշխարհագրական ծագման առումով:

2) ցանկացած գործածություն, որը համարվում է անբարեխիղճ մրցակցության գործողություն «Արդյունաբերական սեփականության պահպանության մասին» 1979 թվականի Փարիզի կոնվենցիայի 10-րդ հոդվածի իմաստով:

*КонсультантПлюс: Ծանոթագրություն*

*Տեղեկատվական բազայում ընդգրկված է «Արդյունաբերական սեփականության պահպանության մասին» 1883 թվականի մարտի 20-ի Փարիզի կոնվենցիան՝ 1979 թվականի հոկտեմբերի 2-ի փոփոխություններով:*

## **Արտոնագրային իրավունքներ**

### **Հոդված 16**

1. Գյուտի, օգտակար մոդելի եւ արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքը պահպանվում է Կողմերի օրենսդրությամբ սահմանված կարգով եւ հաստատվում է պահպանական փաստաթղթով, որով հաստատվում է արտոնագիր ունեցող անձի առաջնությունը, հեղինակային եւ բացառիկ իրավունքը գյուտի, օգտակար մոդելի եւ արդյունաբերական նմուշի նկատմամբ:

2. Գյուտի, օգտակար մոդելի կամ արդյունաբերական նմուշի հեղինակին են պատկանում հետեւյալ իրավունքները՝

1) բացառիկ իրավունք.

2) հեղինակային իրավունքը:

3. Կողմերի ազգային օրենսդրությամբ նախատեսված առանձին դեպքերում գյուտի, օգտակար մոդելի կամ արդյունաբերական նմուշի հեղինակին են պատկանում նաեւ այլ իրավունքներ, այդ թվում՝ արտոնագիր ստանալու իրավունքը, ծառայողական գյուտի, օգտակար մոդելի կամ արդյունաբերական նմուշի օգտագործման համար վարձատրության իրավունքը:

4. Գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի նկատմամբ բացառիկ իրավունքի եւ այդ իրավունքը հաստատող արտոնագրի գործողության ժամկետը հաշվարկվում է արտոնագրի տրամադրելու համար հայտ ներկայացնելու օրվանից՝ Կողմերի ազգային օրենսդրությամբ սահմանված պահանջները պահպանելու պայմանով, եւ կազմում է՝

գյուտերի համար՝ առնվազն 20 տարի.

օգտակար մոդելների համար՝ առնվազն 5 տարի.

արդյունաբերական նմուշների համար՝ առնվազն 5 տարի:

### **Հոդված 17**

Գյուտի, օգտակար մոդելի կամ արդյունաբերական նմուշի համար արտոնագիրը արտոնագրատիրոջը տալիս է բացառիկ իրավունք՝ օգտագործելու գյուտը, օգտակար մոդելը կամ արդյունաբերական նմուշը օրենքին չհակասող ցանկացած եղանակով:

Եթե արտոնագրի առարկան արտադրանք է, ապա արտոնագրատերը իրավունք ունի կանխարգելել երրորդ անձանց կողմից, առանց իր համաձայնության, մասնավորապես, նշված արտադրանքի պատրաստումը, օգտագործումը, պահպանումը, վաճառքի առաջարկ ներկայացնելը, վաճառքը կամ այդ նպատակներով դրա ներմուծումը:

Եթե արտոնագրի առարկան մեթոդ է, ապա արտոնագրատերը իրավունք ունի կանխարգելել, առանց իր համաձայնության, մասնավորապես, մեթոդի կիրառմանն ուղղված գործողությունները, ինչպես նաեւ անմիջականորեն նշված մեթոդով ստացված արտադրանքի պատրաստումը, օգտագործումը, պահպանումը, վաճառքի առաջարկ ներկայացնելը, վաճառքը կամ այդ նպատակներով դրա ներմուծումը:

## **Հոդված 18**

Կողմերը իրավունք ունեն նախատեսել պահպանական փաստաթղթերով տրամադրվող իրավունքների սահմանափակում՝ պայմանով, որ այդ սահմանափակումները անտեղի վնաս չեն հասցնում գյուտի, օգտակար մոդելների կամ արդյունաբերական նմուշների բնականոն օգտագործմանը եւ անհիմն չեն սահմանափակում արտոնագրատիրոջ շահերը՝ հաշվի առնելով երրորդ անձանց օրինական շահերը:

## **Բաժին III**

### **Իրավակիրառությունը**

## **Հոդված 19**

Կողմերը պարտավորություն են ստանձնում կիրառելու նման այնպիսի իրավակիրառ միջոցներ, որոնք պետք է ապահովեն մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ իրավունքների արդյունավետ պաշտպանությունը:

## **Հոդված 20**

Կողմերը նախատեսում են օրենսդրական կարգի այնպիսի միջոցներ, որոնք պետք է ապահովեն կեղծված ապրանքների շրջանառության արդյունավետ կանխարգելումը Մաքսային միության միասնական մաքսային տարածքում, ինչպես նաեւ համացանցում մտավոր սեփականության իրավունքների խախտումներին հակազդելու միասնական միջոցներ:

### **Սահմանապահ միջոցներ**

## **Հոդված 21**

Կողմերը նախատեսում են մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ իրավունքների պաշտպանությանն ուղղված գործողություններ, որոնք ամրագրված են Մաքսային միության մաքսային օրենսգրքում:

## **Վարչական եւ քրեական բնույթի միջոցներ**

### **Հոդված 22**

Մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ իրավունքների պաշտպանության միասնական համակարգ ստեղծելու նպատակով, ինչպես նաեւ սույն Համաձայնագրի 20-րդ հոդվածի դրույթները իրականացնելու նպատակով Կողմերը նախատեսում են Կողմերի լիազոր մարմինների կողմից մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ իրավունքների պաշտպանությանն ուղղված գործողությունների համակարգման մասին պայմանագրի կնքում:

### **Բաժին IV**

#### **Թափանցիկությունը**

### **Հոդված 23**

1. Օրենքներն ու այլ նորմատիվ ակտերը, ընդհանուր կիրառության դատական եւ վարչական վերջնական որոշումները, որոնք գործողության մեջ են դրվել Կողմերից որեւիցե մեկի կողմից եւ կապված են սույն Համաձայնագրի առարկայի հետ (մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ իրավունքների առկայություն, քանակ, ձեռքբերում, իրագործման ապահովում եւ դրանց շահագործման կանխարգելում), ենթակա են պաշտոնական հրապարակման կամ այն դեպքում, երբ նման հրապարակումը նպատակահարմար չէ, պետք է հանրամատչելի լինեն այնպես, որ պետական կառավարման մարմինները եւ իրավատերերը կարողանան ծանոթանալ դրանց հետ:

Սույն Համաձայնագրի առարկայի հետ կապված այն համաձայնագրերը, որոնք գործում են մի Կողմի կառավարության կամ պետական կառավարման մարմնի եւ մյուս Կողմի կառավարության կամ պետական կառավարման մարմնի միջեւ, նույնպես ենթակա են հրապարակման:

2. Յուրաքանչյուր Կողմ ի պատասխան մյուս Կողմի գրավոր հայցին պետք է պատրաստ լինի ներկայացնելու սույն հոդվածի 1-ին կետում նշված տեղեկությունները: Այն Կողմը, որը հիմք ունի համարելու, որ մտավոր սեփականության իրավունքների բնագավառում որոշակի դատական կամ վարչական որոշումը կամ երկկողմանի

համաձայնագիրը շոշափում է սույն համաձայնագրով նախատեսված իր իրավունքները, կարող է այդ դատական կամ վարչական որոշումները կամ երկկողմանի համաձայնագրերը իր համար մատչելի դարձնելու վերաբերյալ կամ իրեն դրանց մասին պատշաճ կերպով տեղյակ պահելու վերաբերյալ գրավոր հայց ներկայացնել:

3. Կողմերը պարտավորություն են ստանձնում ծանուցելու Միասնական տնտեսական տարածքի՝ մտավոր սեփականության հարցերով համակարգման խորհրդի՝ սույն Համաձայնագրի առարկայի հետ կապված օրենսդրական ակտերի նախագծերի եւ այլ նորմատիվ իրավական ակտերի մասին:

4. Սույն հոդվածի 1-3 կետերի եւ ոչ մի դրույթով Կողմերից չի պահանջվում գաղտնի տեղեկությունների բացահայտում, ինչը կխոչընդոտեր օրենքի պահպանման ապահովմանը, այլ կերպ կխոչընդոտեր հանրության շահերին կամ վնաս կհասցներ առանձին պետական կամ մասնավոր ձեռնարկությունների օրինական առետրային շահերին:

## **Համակարգման հարցերով խորհուրդ**

### **Հոդված 24**

1. Կողմ հանդիսացող պետությունների գերատեսչությունների միջեւ մտավոր սեփականության պահպանության եւ պաշտպանության բնագավառում համակարգման եւ տեղեկատվական-տեխնիկական համագործակցության գործառույթները կանոնավոր կերպով իրականացնելու նպատակով՝ Կողմերը նախատեսում են մշտական գործող ինստիտուցիոնալ մեխանիզմի՝ Միասնական տնտեսական տարածքի՝ մտավոր սեփականության հարցերով համակարգման խորհրդի ստեղծում (այսուհետ՝ Համակարգման խորհուրդ):

Կողմերը մշակում եւ ընդունում են դրույթ Համակարգման խորհրդի մասին: Յուրաքանչյուր Կողմ նշանակում է Համակարգման խորհրդի համանախագահ:

2. Համակարգման խորհրդի համանախագահները հաստատում են նշված Համակարգման խորհրդի փորձագետների ցուցակները, որոնց մեջ ընդգրկվում են Կողմերի ներկայացուցիչները:

Համակարգման խորհրդի մեջ են մտնում նաեւ Եվրասիական տնտեսական համայնքի ինտեգրացիոն կոմիտեի քարտուղարության ներկայացուցիչները, որոնց իրավասությանն է պատկանում Եվրասիական տնտեսական համայնքի անդամ պետությունների

քաղաքականության համակարգումը մտավոր սեփականության պահպանության եւ պաշտպանության ոլորտում:

Կողմերը նախատեսում են Համակարգման խորհրդի կանոնավոր նիստերի անցկացում՝ տարեկան առնվազն մեկ անգամ:

## **Վեճերի լուծումը**

### **Հոդված 25**

Կողմերի միջեւ սույն Համաձայնագրի մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով:

Եթե վեճը չի կարգավորվում խորհրդակցությունների ու բանակցությունների անցկացման վերաբերյալ վեճի Կողմերից մեկի կողմից մյուսին ուղղված պաշտոնական գրավոր խնդրանքի ներկայացման օրվանից հետո վեճ ամսվա ընթացքում, ապա վեճի Կողմերից յուրաքանչյուրը կարող է այդ վեճը հանձնել Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

## **Բաժին V. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ**

### **Հոդված 26**

Կողմերի համաձայնությամբ՝ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով:

### **Հոդված 27**

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունվարի 1-ին, բայց դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Կողմերի կողմից կատարելու մասին ավանդապահի կողմից վերջին գրավոր ծանուցումը ստանալու օրվանից ոչ ուշ:

Սույն Համաձայնագրին միանալու եւ դրանից դուրս գալու կարգը սահմանվում է 2007 թվականի հոկտեմբերի 6-ի «Մաքսային միության պայմանագրաիրավական հիմքի



ձեւավորմանը միտված միջազգային պայմանագրերն ուժի մեջ մտնելու, դրանցից դուրս գալու եւ դրանց միանալու կարգի մասին» արձանագրությամբ:

Կատարված է Մոսկվա քաղաքում, 2010 թվականի դեկտեմբերի 9-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահպանվում է Եվրասիական տնտեսական ընկերակցության ինտեգրացիոն կոմիտեում, որը որպես սույն Համաձայնագրի պահառու, յուրաքանչյուր Կողմի կտրամադրի իր վավերացված օրինակը:

(ստորագրություններ)